

Հավելված

Արտակարգ իրավիճակների նախարարության
Փրկարար ծառայության տնօրենի 2021 թվականի
մարտի 10-ի N 17/240-Լ հրամանի

ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ՄԻՋԵՎ, ԸՍՏ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱՇԽՈՒՄ

1. Արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ԱԻՆ) Փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) տնօրեն, փ/ծ գնդապետ Արմեն Գասպարյանը պատասխանատու է ԱԻՆ ՓԾ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրական խնդիրների կատարման և բնականոն ու պատշաճ գործունեության համար:

2. ՓԾ տնօրեն, փ/ծ գնդապետ Արմեն Գասպարյանը համակարգում է հետևյալ ստորաբաժանումների գործունեությունը՝

- 1) Ծառայության կազմակերպման վարչություն.
- 2) Կադրերի վարչություն.
- 3) Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն (վարչություն).
- 4) Երևան քաղաքի փրկարարական վարչություն.

5) փրկարարական ծառայության կազմակերպման և վերահսկողության, փրկարարական ծառայողների աշխատանքային գործունեության ընթացքում օրինականության, կատարողական և ծառայողական կարգապահության պահպանման նկատմամբ հսկողության իրականացման, ծառայողական իրավախախտումների կանխարգելման և ծառայողական քննությունների կատարման, աշխատանքային ծրագրերի և պլանների համակարգման, ՓԾ համակարգի ընթացիկ և տարեկան պլանավորման կազմակերպման, ՓԾ ստորաբաժանումների միջև կապի կազմակերպման, տեխնիկական, ծրագրային ապահովման և տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության կազմակերպման, Հայաստանի Հանրապետությունում կենտրոնացված ազդարարման համակարգի ստեղծման, արդիականացման և դրա աշխատունակության ապահովման, ԱԻՆ և ՓԾ վարչական շենքերում ու տարածքում

հերթապահության (պահպանության) ու պարեկային պահակային ծառայության կազմակերպման և ապահովման: